Արձանագրություն N 3

ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2018/6 ծածկագրով գնումների էլեկտրոնային (eauction.armeps.am) միջոցով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար ջրատաքացուցիչների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

06 դեկտեմբերի 2018 թ.
ժամը 10:00

ք. Երևան

Մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Մարիանա Դուրգարյանը, անդամներ՝ Հասմիկ Վանյանը, Սյունե Սարգսյանը և քարտուղար՝ Սպարտակ Հարությունյանը:

Օրակարգ
Հայտերի արդյունքների գնահատման վերաբերյալ

ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2018/6 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Մարիանա Դուրգարյանը նիստը հայտարարեց բացված: Հանձնաժողովը ուսումնասիրելով «ՌԱԴԻԿ ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշների համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև ՀՀ պետական եկամուտների կողմից ստացված եզրակացությունը /կցվում են/, հանձնաժողովի անդամների կողմից իրականացվեց հայտերի գնահատում /գնահատման թերթիկները կցվում են/, որի հիման վրա հանձնաժողովը որոշեց՝

Հաշվի առնելով, որ «ՌԱԴԻԿ ՇԻՆ» ՍՊԸ-ն ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ստացված եզրակացությունների համաձայն Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ, հրավերով սահմանված ժամկետում ներկայացրած որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը համապատասխանում են հրավերի պահանջներին՝

«ՌԱԴԻԿ ՇԻՆ» ՍՊԸ - ին ճանաչել որպես ընտրված մասնակից:

Գնահատող հանձնաժողովը որոշեց ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2018/6 ծածկագրով գնման հրավերով սահմանված ժամկետում «ՌԱԴԻԿ ՇԻՆ» ՍՊԸ-ին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3 դեմ 0:

նախագահ _____ Մարիանա Դուրգարյան

անդամներ _____ Հասմիկ Վանյան

_____ Սյունե Սարգսյան

քարտուղար _____ Սպարտակ Հարությունյան